



## «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական  
բժշկական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2018 թվականի  
դեկտեմբերի 26-ի թիվ 18-12-17-05 որոշմամբ

Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր

Ա.Ա.Մուրադյան

### Կ Ա Ր Գ

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՍԱՀՍԿՄԱՆ ԵՎ  
ՏԵՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

### Մ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Երևանի Մխիթար Հերացու անվան  
պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան)  
վարչական տարածքում տեսահսկում և տեսագրում իրականացնելու հետ կապված  
հարաբերությունները:

2. Տեսահսկման համակարգը և անձնական տվյալներ պարունակող տեսա-  
գրությունները տարածքի, միջոցառման, գործունեության կամ անձի տեսաձայ-  
նահսկումն է էլեկտրոնային սարքավորման միջոցով: Համակարգը կարող է աշխատել  
տեսագրման ռեժիմով (երբ *տեսագրվում է*) և իրական ժամանակում տվյալների  
փոխանցման եղանակով: Տեսահսկման համակարգով կատարված տեսագրությունը  
համարվում է անձնական տվյալ, եթե հնարավոր է նույնականացնել տեսագրության  
մեջ երևացող անձի դեմքը (ուղղակի նույնականացում) կամ անհնար է  
նույնականացնել անձի դիմային առանձնահատկությունները, բայց  
տեսանկարահանված անձի ֆիզիկական կամ վարքագծային առանձնահատ-

կություններն այլ տվյալի հետ համեմատելով՝ հնարավոր է նույնականացնել անձին (անուղղակի նույնականացում):

3. Համալսարանի տարածքում կատարված տեսահսկումը և տեսագրությունը, անկախ դրանց բովանդակությունից, համարվում են Համալսարանի սեփականությունը՝ բացառությամբ հեղինակային իրավունքի օբյեկտների:

4. Կարգը պարտադիր է աշխատողների, պացիենտների, վարչական տարածք մուտք գործած այլ անձանց, ինչպես նաև սովորողների համար:

5. Համալսարանի վարչական տարածքում տեսահսկման և տեսագրության նպատակները բխում են Համալսարանի կանոնադրությունից, կատարվում է Համալսարանի կողմից մատուցվող ծառայությունների ընթացքը վերահսկելու, անձանց և գույքի պաշտպանության նկատառումով, ինչպես նաև ներքին կարգապահական կանոններով սահմանված այլ պարտադիր պայմաններ վերահսկելու նպատակով:

6. Սույն կարգի իմաստով «վարչական տարածք» է համարվում Համալսարանին օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնված կամ սեփականության իրավունքով պատկանող տարածքները:

## II. ՏԵՍԱՀՍԿՄԱՆ ԵՎ ՏԵՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

### ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Տեսահսկման համակարգի տեղադրումը և շահագործումն իրականացվում է օրինականության, համաչափության, թափանցիկության և անվտանգության սկզբունքների պահպանմամբ:

1) **Օրինականության սկզբունք.** տեսահսկումը պետք է իրականացվի միայն օրենքով նախատեսված նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով: Տեսահսկման համակարգի տեղադրումը կարող է հետապնդել մեկից ավելի օրինական նպատակ:

2) **Համաչափության սկզբունք.** տեսահսկման համակարգն օգտագործվում է միայն այն դեպքերում, երբ այլ եղանակներով անհնար է հասնել հետապնդվող նպատակին կամ պահանջվում է անհամաչափ ջանքեր: Համալսարանը ապահովում է հավասարակշռությունը հետապնդվող նպատակի և նկարահանվող անձի մասնավոր կյանքի պաշտպանության միջև, տեսանկարները մշակվում են այն նվազագույն ծավալով, որն անհրաժեշտ է օրինական նպատակներին հասնելու համար: Տեսախցիկը տեղադրվում է այնպես, որ նրա տեսադաշտ ճշգրտորեն մտնեն միայն այն պատկերները, որոնք համապատասխանում են հսկողության նպատակին: Տեսահսկման

արդյունքում հավաքված տվյալները (ներառյալ տեսագրությունները և նկարները) պահպանվում են հետապնդվող նպատակին հասնելու համար անհրաժեշտ ժամկետով: Տեսախցիկով գրանցված անձնական տվյալները պետք է ջնջվեն որոշակի ժամկետում, բայց ոչ շուտ քան 24 ժամը լրանալուց հետո: Օբյեկտիվ և կարևոր շարժառիթների առկայության դեպքում տվյալների պահպանման ժամկետը կարող է երկարաձգվել:

3) **Թափանցիկության սկզբունք.** Թափանցիկության սկզբունքը ներառում է մի կողմից Համալսարանի պարտականությունը տեսահսկվող անձանց տեղեկացնելու տեսահսկման իրականացման վերաբերյալ (բարեխղճության սկզբունք), իսկ մյուս կողմից՝ տեսահսկվող անձանց իրենց անձնական տվյալների վերաբերյալ տեղեկություններ ստանալու իրավունքը (տեղեկատվության մատչելիության սկզբունքը):

4) **Բարեխղճության սկզբունք.** Համալսարանը տեսանելի նախազգուշացման միջոցով տեսախցիկների նկարահանման դաշտ մտնող բոլոր անձանց պետք է տեղեկացնի տեսահսկման մասին: Եթե տեսահսկման տարածքն ընդարձակ է, կարող է տեղադրվել մի քանի նախազգուշացնող նշաններ կամ մեկ նշան՝ մուտքի դռան մոտ:

5) **Տեղեկատվության մատչելիության սկզբունք.** յուրաքանչյուր անձ իրավունք ունի ստանալ տեղեկություն իրեն տեսահսկելու եղանակների (տեսագրում կամ տեսաձայնագրում), հիմքերի և նպատակների, տեսահսկվող տվյալների ցանկի (սահմանների) և տեսագրությունը ձեռք բերելու աղբյուրների մասին, ինչպես նաև այն անձանց շրջանակը, որոնց կարող է փոխանցվել իր տեսագրությունը: Համալսարանը տեսահսկման սուբյեկտին հնարավորություն է ընձեռնում անվճար ծանոթանալու անմիջականորեն իրեն վերաբերող տեսագրությանը (տեսաձայնագրությանը), իսկ եթե Համալսարանը պահպանում է տեսագրությունը (այսինքն՝ կա տեսագրությունը ձեռք բերելու աղբյուր), ապա տեսահսկման սուբյեկտն իրավունք ունի նաև ստանալ տեսագրության կրկնօրինակը (ձեռք բերել տեսագրությունը): Համալսարանը տեղեկությունները պետք է տրամադրի հասանելի ձևով, իսկ այդ տեղեկությունները չպետք է պարունակեն այլ սուբյեկտների անձնական տվյալներ: Տեսահսկման սուբյեկտը տեսագրությունը կարող է ստանալ նաև իր ներկայացրած կրիչով՝ կրկին անվճար: Եթե տեսահսկման սուբյեկտը չի նշել, թե ինչ կրիչով է ցանկանում ստանալ տեսագրությունը, ապա այն տրամադրվում է Համալսարանի համար առավել ընդունելի կրիչով: Տեղեկությունները տրամադրվում են գրավոր հարցումն ստանալուց հետո՝ հինգ օրվա ընթացքում:

6) **Անվտանգության սկզբունք.** Համալսարանը կազմակերպական և տեխնիկական միջոցառումներ է ձեռնարկում անձնական տվյալները չթույլատրված մշակումից պաշտպանելու համար (տվյալների անվտանգության սկզբունք): Գրանցված տվյալ-

ները հրապարակման ենթակա չեն, բացառությամբ, եթե տվյալներն այլ անձանց փոխանցվում են օրենքով նախատեսված դեպքերում: Տեսախցիկները կարող են նկարահանել աշխատավայրի շենքի մուտքը և ելքը, միջանցքները, ինչպես նաև թանկարժեք ապրանքների գտնվելու վայրերը և պահեստները:

8. Տեսահսկման սարքերը չեն կարող նկարահանել աշխատողների աշխատասենյակները, բացառությամբ հատուկ հանգամանքների առկայության դեպքում (օրինակ՝ դրամարկղը, պահեստը: Այս դեպքում նկարվում է դրամարկղը, ոչ թե գանձապահը, կամ պահեստը, որտեղ աշխատում են բանվորները): Տեսագրությունները, տեսախցիկի միջոցով գրանցված նկարները չեն կարող օգտագործվել այլ նպատակներով (նկարները համացանցում տարածել): Դրանց օգտագործումը չպետք է վնաս պատճառի այլ անձանց իրավունքներին: Անձինք նախազգուշացնող նշանների միջոցով պետք է տեղեկացված լինեն տեսախցիկների առկայության մասին:

9. Տեսախցիկները կարող են տեսանկարել նաև կրթական մասնաշենքերի արտաքին կողմը՝ ուժեղացնելու անվտանգությունը դրա շրջակայքում (կանխելու՝ բռնությունները, կողմնակի անձանց մուտքը): Նշված վայրերում տեսախցիկները կարող են տեսանկարել շենքի մուտքը, ելքը, սանդուղքը, միջանցքները, ինչպես նաև քննասենյակները:

### **III. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

10. Համալսարանը պատասխանատվություն է կրում «Անձանական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով սահմանված կարգը կամ տեսահսկման սուբյեկտի պահանջով Համալսարանի կողմից տեղեկատվություն չտրամադրելու կամ տրամադրման կարգը խախտելու համար:

### **IV . ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

11. Կարգն ուժի մեջ է մտնում գիտական խորհրդի կողմից հաստատվելու օրվան հաջորդող օրվանից և գործում է անժամկետ:

12. Կարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն գիտական խորհրդի որոշմամբ:

Կատարող՝

Մարդկային ռեսուրսների կառավարման

բաժնի պետի տեղակալ՝

Վ.Դանիելյան

Համաձայնեցված է՝

Ռեկտորի խորհրդական՝

Ի.Արզարյան

Իրավաբանական բաժին՝

